ՈՐՈՇՈՒՄ

N ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-26/3 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Սաքան» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու մասին

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով, և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով մոդուլային կահույքի ձեռքբերման նպատակով 2026 թվականի ապրիլի 30-ին հրապարակվել է ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-26/3 ծածկագրով գնանշման հարցման հրավեր /ընթացակարգ/:

Հրավերին հայտ են ներկայացրել «Դամկար» ՍՊԸ, «Բեսթ Ֆիրմ» ՍՊԸ, Անդրանիկ Աղաբաբյան Ա/Ձ, «Սաքան» ՍՊԸ և «Գործ-555» ՓԲԸ կազմակերպությունները (հայտը կցվում է):

Հանձնաժողովը, ուսումնասիրելով հայտերով ներկայացված փաստաթղթերը, արձանագրել է, որ բոլոր մասնակիցների հայտերը համապատասխանում են ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-26/3 ծածկագրով գնման հրավերով սահմանված ծրարների կազմման և ներկայացման պահանջներին, ուստի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են բավարար:

Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա, 2026 թվականի մայիսի 06-ի N2 արձանագրությամբ՝ որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Սաքան» ՍՊԸ-ն (արձանագրության պատճենը կցվում է):

«Սաքան» ՍՊ ընկերությանը պատշաճ ծանուցվել է հաղթող մասնակից ճանաչվելու մասին և 21.05.2026թ. ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար ապրանքի մատակարարման /մոդուլային կահույքի/ ձեռքբերման գնման ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-26/3 ծածկագրով պայմանագրի կնքման առաջարկ, էլեկտրոնային փոստով ուղարկվել է պայմանագրի նախագիծը:

«Սաքան» ՍՊԸ-ի կողմից 27.05.2026թ. ներկայացվել է գրություն, որի համաձայն հրաժարվում է մուդուլային կահույքի ձեռքբերման պայմանագիրը կնքելուց (գրության պատճենը կցվում է):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Սաքան» ՍՊ ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները:

_ադունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի ասները՝ «Սաքան» ՍՊ ընկերությունն ընդգրկվում է գնումների գործընթացին գցելու իրավունք չունեցողների ցուցակում:

Ստորև ներկայացվում են անհրաժեշտ տեղեկությունները՝ համաձայն ձևաչափի.

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
Ծածկագիրը	Չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	Համարը	Անվանումը	Գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-26/3	1	Մոդուլային կահույքի ձեռքբերում	20000000	«Սաքան» ՍՊԸ	08921218	ՀՀ, Վ. Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր Շահումյան 21	27.05.2026	ՀՀ ՆԳՆ Կրթահամալիր ՊՈԱԿ	Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.1րդ կետի 7-րդ ենթակետ/ հրաժարվել է պայմանագիր կնքելու իրավունքից:	Առկա չէ

Կից ներկայացնում եմ «Սաքան» ՍՊ ընկերությանը N ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-26/3 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցության հայտի և 2026թ մայիսի 06- ի ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-26/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի N2 արձանագրության պատճենները:

Սույն որոշման բնօրինակն ուղարկել ֆինանսների նախարարություն, պատճենը՝ «Սաքան» ՍՊ ընկերությանը:

ՌԵԿՏՈՐ՝ **Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**